

աբան եմ, և ահա սուրբ Յակովբայ վանուց այս 27 տարի է որ սոյն վանուցս մէջ կը սպասաւորեմ, և ամեն ժամանակ անոնց արարքները աչքիս դիմացն են. թէ անոնց և թէ ուրիշ ազգաց վրայ տեղեկութիւններ ուրիշէն հարցնելու կարօտութիւն չունիմ. ուրեմն այսքան լիովին տեղեկութիւն ունենալովս և անոնց արարքները ականատես իմ վիայութեամբս մի ըստ միովէ գիտնալովս, զիսորդ կարելի է անոնց խոնարհութեան հնազանդութե և խօսքերնուն խաբուիլ, որք սուտ է բոլորովին: Եւ միանգամայն իմ սեփականելու իրաւունքիս համար յայտնի թակարթ մի է: Կանցնի այս օրս, այս տարիս կամ միւսն եւս խաղաղութեամբ, և կը պատահի ապագայ ժամանակին սոյն պէս երբ իմ իրաւունքներս բռնաբարել սկսին, այն ատեն ուր պիտի գտնեմ Ձեր Վսեմութիւն և Պ. Հիւպատոսը որ՝ ըսեմ. ահա Լատինք Ձեր Վեծութեան տուած խօսքերնին հաւաքել սկսան գործել. դուք ձեզէն դատ արարէք ըստ ձեր հաւատարիմ խոստմանդ, և այն:

«Քաւ լիցի Տեալք իմ, որ իմ ձեռքս այս աղէտքը թէ Ս. Լթոռոյս և թէ ընդհանուր Հայոց Ազգիս գրեթէ խուն բերելու պատճառ ըլլամ, այդ ստորապատեման չեմ կրնար ձեռնամուխ ըլլալ. մանաւանդ թէ Ձեր Վսեմութեան պատուական անուան կը խնայեմ ապագային մէջ, զի որուն հետեւութիւնն շատ ծանր ապագայ մը պատրաստել ըսել է ամենայն կերպիւ Ձեր հըւ հպատակ Հայոց ազգին համար, քանի որ այս խնդիրը որ զուտ կրօնական է երթալով երթալով քաղաքական կերպարանք առնելով Հայոց Ազգին միակ միսթաւութեան միացած սեփականութե

իրաւունքին սաստիկ հարուած պիտի պատճառէ, և նոյն հարուածէն ահա գին վերք մը անբուժելի, զոր բժշկելու համար ծարստոր և ամենածարստոր բժշկի պէտա պիտի ունենամք՝ եթէ կարողանամք երբէք գտանել: Սի, Տեալք իմ, խնդրեմ մի եւս ստիպէք զիս այդպիսի աղէտից սկզբնապատճառ ըլլալու. ինձ համար ահա օր յարմար և ահա ժամանակ փրկութեան. և սոյն է իմ խօսքիս սկիզբն և վերջն, այսինքն ոչ երբէք կրնամ ընդունել Լատինաց գալը պատարագ մատուցանելը իմ սեփական տուրք Եկեղեցիիս մէջ, որ միայն Հայոց ազգին սեփական ստացուածքն է:

Պարծեալ վերջացաւ ժողովն առանց որոշ վճիռ ինչ տալու:

(Հարունալիւ)

ԼՈՅՍ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

(Հարունակութիւնի վերջ, տես թիւ 2)

Յետնահատակութեան Վարդանանց, կը հոլովին դարեր, կը սահին տարիներ, կը յաջորդ են խաւար դարեր և տարիներ, յորս ամբողջ Հայաստան գրեթէ տգիտութեան շնորհիւ կը լողայ արեան և աղետից ծովու մը մէջ:

Եւս դարուց մէջ կ'ունենայ Հայաստան արիւնընդուշտ վատ Բուդաներ, ազգադաւ և Հայ մատնիչներ, որոնցմէ ըստը՝ սոսկալով կը փախչի և լերանց խորշերու և ծերպերու մէջ կ'երթայ ապաստանիլ. լեռներու դագաթներ յանկարծ լուսարաններ կը հաստատուին (1). լուսով բորբոքեալ վառվառն էակներ հոն դիմելով կ'ուխ

(1) Լուսարան ըսելով վանք պէտք է իմանալ:

տեն լուսով ապրիլ, մինչ զի և լուսոյ համար հոգի աւանդել:

Այս սարսափելի դարուց մէջ երեւելի հանդիսացան Սիւնեաց, Տարոնայ, Նարեկայ և ապա Կիլիկիոյ վանքերը, լուսաւոր ժողովուրդը ցուպ 'ի ձեռին հաց 'ի մախաղն, բոպիկ, գլխի բաց հոն կը վաղէր՝ որպէս զի կենաց լուսով մկրտուելով աշխարհիս մէջ լուսով ապրիլ սորվի:

Իայց 'ի Հայաստան երբ այսպէս, անգին Հրէաստանի աւերակաց վերայ՝ զոր լուսոյ Աստուած մի իւր նբարեամբն ներկած էր, ահա յանկարծ տաճար մի է որ կը կանգնի (1), հաղաբաւոր մղններով հեռի Հայ ժողովուրդը՝ Գողգոթայի լեռին վրայ հայ շրթունքներէ բղխող առ Աստուած օրհնութեան մրմունջներ կը լսէ, որք անմահ Աստուծոյ մի հոգի աւանդած արիւնշուայ խաչին առջեւ՝ ծունր ի ջած իրենց խեղճ եղբարց համար կ'ազօթէին. ժողովուրդը հոն ալ կը դիմէ և կ'ուխտէ տարուէ տարի գալ երկիր պագանել հոն Աստուծոյ, և սփռիլ իւր վշտերէն՝ իր հայ եղբարցմէ միւթ թարութիւններ լսելով, որք Գողգոթայի լեռին վրայ տարածուած Փրկիչը մատամբ ցուցնելով կը մխիթարէին այն իրենց համարիւն թշուառ եղբարքը:

Այս սոսկալի դարերէն զինի, յորս Հայաստան հեծեց իւր ազգի ազգի թշուառութեամբը, յաջորդեց ապա ԺԲԴ դարը:

Այս դարը Հայաստանի արծաթի դարը կը համարուի:

Այս դարու մէջ երեւելի եղան Ներսէս շնորհալի, Ներսէս լամբրու

նացի, Սարգիս, և Իգնատիոս ընտիր Սրբազան հայրեր. որոց շնորհիւ բաւական մխիթարեցաւ թշուառն Հայաստան. և Հայ գրականութիւնը դարձեալ բաւական ծաղկեցաւ:

Իայց աւանդ, այս դարն ալ շուտ կ'անցնի, կը յաջորդեն դարձեալ սեաւ դարեր, և Հայաստան ահա կ'ընկղմի բոլորովին յանգուցաւ թշուառութեանց շնորհիւ տգիտութեան:

Այլ թշուառութեանս, ինչ է այդ որ կը նշմարեմ, ուր կը տանին այդ թշուառ խմբերը, ուր այդ խեղճ և ողորմելի էակները, ոմանք ջախջախեալ, ոմանք շղթաներու կաշկանդուած, ոմանք աստ և անդ արիւն լուայ փուռած, ոմանք բանտերու մէջ կը հեծեն, ոմանք գետերու մէջ կը լողան, գթութիւն կ'աղաղակեն. բայց որո՞ւ հոգ, ո՞վ միտ կը դնէ. կը լողան դոքա, և հուսկ ապա կը գլորին յանգուցաւ աղետից: Ի՞նչէ, դոքա Հայեր են. ո՞հ, լալու և հեծելու դատապարտուած Հայեր. բայց դոցա հայրական ճակատուց վրայ ինչ է որ կը նշմարեմ, լոյս. իսկ սրտից վերայ, յոյս. 'Դոքա ահա անվահեր կ'աղաղակեն. "Ի զմէր աղէտք, 'ի զմէր սուր և բռնութիւն թող մաքառին. 'ի նանիր թող շղթայք զմեզ պրկեն, մեր աղաղակը մեր ձայնը սա պիտի ըլլայ յաւիտեան, " Աստուած և հայրենիք " կ'ըսեն, և կողկողելով կ'իյնան:

Այլ ցաւոցս. իսկ այդ ինչ է, ուր կը տանիք, անդուծք, այդ աղածրի մանկունքը, ուր այդ գեղանի կուսան մանկիկները, ո՞հ, դոքա կուլան. հայրիկ, մայրիկ, կ'աղաղակեն, բայց որո՞ւ հոգ. բա՞րէ, ահա բռնաւորին թուրը կը շողայ, և կը կրկնէ. " Ուրաջիր Աստուածդ, ուրաջիր զարիւնն հայութեան " Այ, կը կրկնեն դոքա, և կը լողան արեանց մէջ:

(1) Աբրահամ պատրիարքի ժամանակ բսել կ'ուղեմ, ասիկց յառաջ եղածին՝ տեղեկութիւն ուղղեց երուսաղէմոյ պատմութիւններէն կրնայ ի մանալ:

Ահա այսպէս իւր հայրենի հողէն զրկուած՝ ու օտար աստղերու տակ թաղիլ դատապարտուած հայը՝ չուրանար երբէք իւր սրտի լուսոյ գոյութիւնը, չուրանար նա եւ այն սուրբ խաչը՝ զոր իւր հարբն ու հաւքն սրեամբ ներկելով թողուցած էին իրեն ՚ի յիշատակ։

Երանց գազաթներու վրայ զայն կը կանգնէ, աստ և անդ լուսոյ խորաններ կը հաստատէ, և հոն կ'երկիրպագէ իւր հարց Աստուծոյն։

Բայց խաւարը տակաւին իւր պատեւրազմը կը շարունակէ, կը կործանէ լուսարանք, հոյ ճարակ կուտայ լուսեղէն մատենանք, և ապա լի կատաղութեւ թուրը կը քաշէ և մահ կը տպաւնայ։

Բայց լուսով վառուած հայը՝ կը բանայ վերջապէս իւր կուրծքը. « զարկ, կործանէ՛ այս տաճարը, մարէ՛ այն լոյսը՝ որ հոս կը վառի. » կ'ըսէ և կը մեռնի։

Եւ իւր արեամբն արիւնոտած խաչը գրկելով կը թռչի յանմահութիւն, երգել և պարել նոցա հետ, որք նոյն յուսով մեռան, նոյն յուսով հոն թռան, և Յաւիտենականն եւս ՚ի սէր հայրենեան իրաւանց, զոհեալ նահատակաց արդէն հիւսուած պըսակը՝ նորա ճակատը բոլորելով կ'ըսէ.

« Ահա քեզ երջանկավայր յաւիտենական, ցնծա՛ և հրճուէ՛, ո՛վ լուսոյ գոյութիւնը յարգող, և հայրենեաց խորանը պաշտպանող սիրելի զաւակ։ »

Այս ահուելի դարերէն զինի՛ կը յաջորդէ հուսկ ապա ԺԹԳ դարը։

Հազիւ թէ այս դարը իւր կէս շըրջանը լրացուցած էր, ահա յանկարծ հայը իւր աշուրները շփելով լոյս կը նշմարէ, կը նշմարէ նա և յայտնի այն սոսկալի վիճը՝ ուր գլորած էր շնորհիւ տգիտութեան. ուստի լոյս կը գոչէ և կըսի իւր տիւր. « Աստասէր և եռանդուն սրտեր կը բորբոքին և կը խրախուսեն ժողովուրդը, կը բարո-

ւն որ հայութեան փրկութեան միակ յոյսն՝ լոյսն է. վասն զի քաջ գիտցան սորա՝ որ ազգ մի այն ժամանակ կրնայ երջանիկ վիճակ եւ ապագայ ունենալ, երբ լուսով ապրի և լուսով գործէ։

Սոցա քաջալերիչ բարբառէն քաջալերուեցաւ ժողովուրդը և սկսաւ շարժիլ. բայց լուսասէրք անով չըգոհացան, վասն զի քաջ գիտցան որ ազգ մի այնպէս դանդաղ շարժմամբ չկրնար զարգանալ. ուստի հայութեան այս բուն ճշմարիտ և հաւաքատ զաւակները կրկնեցին ժողովրդեան, « քալէ՛, բայց ծառայելով Աստուծոյ և հայրենեաց։ »

Բայց ո՞վ պիտի տար կարաղութիւն այս ժողովրդեան քաջ գիտնալու իւր այդ պարտաւորութիւնը՝ կրկնեցին դարձեալ նորա. « լոյսը։ »

Օգայ ժողովուրդը և սկսաւ գործել, և ահա աստ և անդ լուսարաններ հաստատուեցան, ազգային մանկալիներ հոն գիմեցին գունդագունդ, որպէս զի ազգն ՚ի զարգացումն առաջնորդող լոյսը՝ իրենց սրտի մէջ վառելով ոչ թէ միայն արժանանան ըլլալ հայութեան բարի և առաքինի զաւակներ, այլ և կարողանան լուսոյ շնորհիւ բոլորովին հալածել, ընդհաւնուր Հայաստանի հորիզոնը պատած՝ այն դարաւոր խաւարն՝ որ անչափ սղետից և ազգի ազգի թշուառութեց պատճառ եղած էր։

Լուսոյ այս տաճարներուն մէջէն սկսաւ ազգայնութեան բոցը ծաւալիլ. ամեն ուրեք սկսաւ լոյս, այս բարբառը լսելիլ. և հայութեան աւրիւնը որ դարերէ հետէ տակաւ առ տակաւ սկսեր էր սառիլ, յանկարծ սկսաւ բորբոքիլ դարձեալ հայ երակներու մէջ, և հայն լուսով սկսեց զարգանալ։

Բայց աւանդ, քանզի այս լոյսը նսեմ

էր և զարգացումն կաղն 'ի կաղ կը քայլէր, ինչո՞ւ—\] ասն զի ազգին զարգացման փափաքող եռանդուն սրբտերը խրախուսող չկար :

\] ուսասէր անձինք՝ ազգաց պատմութեան էջերն դարձունելով, տեսան որ այն աղբերը և ժողովուրդները միայն զարգացած էին, որոնք իրենց լուսայ նահատակաց ոչ թէ միայն լոկ քաջալերութեամբ, այլ և փառաւոր պսակներով վարձատրած էին : \] Լստի ափշեցան մնացին, երբ տեսան որ ազգը իւր զարգացման փափաքողները ոչ թէ միայն պսակել, այլ գոնէ լոկ քաջալերել չգիտէ, տեսան նաև որ ազգը դեռ կարողութիւն չունէր իւր բարին ու չարն քննել և որոշել, տեսան վերջապէս որ ազգը թէ իւր բարերարին և թէ իւր չարարարին՝ մի և նոյն ակամբ կը նայէր, բայց սակայն չյուսահատեցան այս զգայուն էակները, ուստի լոյս դարձեալ աղաղակեցին, բայց ահա յանկարծ \]. \] ահակայ, \]. \] ետրովպայ եւ այլոց Հայաստանեայց բարերար նահատակաց հազար տարիէ 'ի վեր չորցած կրմախններն աղաղակեցին, պսակ : \] Կրկնեցին և սոքա, չկայ, \] Եւ մարդկութիւնը կրկնեց. չկայ ուրեմն այդ ազգին զարգացում : Իսկ ես երբ լսեցի զայս, ահա պաղ քրտինք մի էր որ ուղղեց բոլոր մարմինս :

\] Եսնք լսելով դո՛ւք հայեր, մի յուսահատիք այլ քաջալերութեցէք, վստն զի մարդկային կամաց առջեւ ամեն բան կը խոնարհի և կը դիւրանայ, դո՛ւք, որ կը զգայք այն լուսոյ հուրը ձեր սրտերու մէջ, որով բորբոքեցան ձեր հայրերը և դորձեցին, դո՛ւք ինչո՞ւ պիտի դադարիք գործելէ : Հայեր, ձեզ են այս իմ խօսքերս, ձեր հոյկական աչաց վեհ ակնարկները, անգամ մի ձեր հարց հոգի աւան

դած ու հոն հանդէս՝ աւերակներուն վրայ ձգեցէք, և այն հսկայազոր արդարասէր դիւցազանց ցուրտ շիրմաց վրայ տեսէք ի՞նչ գրած է \] Եւ խոնարհանին ահաւոր մատը. « Ղ'ստուած և զհայրենիս սիրելով՝ սոքա յուսով մեռան : »

\] Լստի դո՛ւք և ս արժանացիք ըլլալ զաւակ \] ստուածութեան, զաւակ հայրենեաց, զաւակ և մարդկութեան, և գիտցիք, որ այն ատեն կայ ձեզ յերկինս պատրանստ պսակ, պատրաստեալ յանմահ \] Երարէ մի :

Ձեր անցեալը պատմեցի, եղբայրք, ահա ձեր այժմեանը կրնե՞րկայացնեմ ձեզ, կը խոստովանիմ այո՛, որ այսօր փոքր 'ի շատէ ըստ կարի լուսոյ մէջ կ'ապրիք, բայց գիտցիք, որ և ոչ իսկ քայլ մի պիտի կրնաք առնուլ դէպ 'ի զարգացում, քանի որ այն լուսասէր անձինք՝ որ ձեզ կենաց բարօրութեան պատճառ եղող լոյսը՝ մատակարարել գիտեն, վարձատրել չք գիտէք : \] Եւ քանի՞նք գիտեմ, որ այսօր փոխանակ ազգին ծառայելու, ազգին մանկտին դաստիարակելու 'ի լոյս, ոմանք օտարաց, ոմանք թափառական, ոմանք այլ և այլ դորձերու ծառայելով՝ հառաչելով օրեր կ'անցունեն, կըսպասեն և կը փափաքին այն աւուր՝ որ զայ, և գերեզմանի ցուրտ քարը իրենց բորբոքեալ սիրտը զովացնէ : Ի՛նչնէր դարձեալ գիտեմ, որոնց վրայ ազգն եթէ իւր խնամն ավուէ, ազգին ի՞նչ ծառայութիւններ չեն կրնար ընել :

\] Լստի ջանացէք, Հայեր, վարձատրել վերջապէս զանոնք՝ որք կարող պիտի ըլլան ձեր դեռավթիթ մանկանց սրտերու մէջ այն լոյսը վառել, որ մարդկութիւնն 'ի զարգացումն կ'առաջնորդէ և ոչ 'ի կործանում :

\] վերջ բանիցս կը կրկնեմ, դար

ձեռք դրաց, ուր պսակ կամ քաջա-
լերութիւն, անդ լոյս, և ուր լոյս,
անդ զարգացում, անդ բարօրութիւն
և երջանկութիւն:

Այս լոյսի իմ ազաւորակ, այս և իմ
սրտի ձայն յաւիտեան:

1871 Մարտի 8.

Արարապետ

Տ. Մանասեան:

ԿԱՐԾԵԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ

Սրտի նախորդ դեկտեմբեր ամ-
սաթուոյն մէջ կարծեաց միութեան
վրայ երկու խօսք ըսելու խոստում
ըրեր էինք, և ահա այժմ խոստում
նիս կը կատարենք համառօտակի:

Արդի փիլիսոփայութիւնը՝ կար-
ծեաց ազատութեան եւս պաշտպան
կեցաւ խորհելու ազատութեան հետ:

Քանի որ, ըսաւ, մարդիկ խորհե-
լու կարողութիւնն ունին, սէտք է
ուրեմն նորա ազատ ըլլան խորհրդին
հետ իրենց կարծիքն ալ յայտնելու,
որ եթէ ճշմարիտ համոզման հիմանց
վրայ յենուեն, և նախապաշարմունքէ
ու կանխադատութենէ հեռի ըլլան,
այն կարծիքներն անբռնաբարելի են:

Սակայն շատերը կարծեցին թէ
երբ կարծեաց ազատութիւն կոչ,
կարծեաց միութիւն անհնարին է:

Սենք չենք հաւատար որ կար-
ծեաց ազատութիւնը կարծեաց անմի-
ութիւն ենթադրէ. վասն զի երբոր
մարդկան մօրերը լուսաւոր և սրտե-
րը պաշարումէ ազատ են, ծուռ և
սխալ կարծեաց տեղի չեն տար. իսկ
եթէ գտնուին այնպիսիներ որոյ
մօրերը շիւթ ու խաւարին և որո-
տերն ապականեալ են, հարկաւ ա-
նոնց կարծիքը ծուռ պիտի ըլլան. և
եթէ համոզումն ընդունելու ևս տը-
րամադրութիւն չունենան, այլ ի-

րենց թիւր կարծեաց վրայ յամառին,
այնպիսեաց կարծիքն ալ ոչ թէ կար-
ծեաց ազատութենէն կը բղխին, այլ
լիկ նախապաշարման կամ նոյն իսկ
տգիտութեան արդիւնք են:

Սրտ շատ անգամ նոյն իսկ կար-
ծեաց ազատութեան բռնաբարումը՝
կարծեաց անմիութիւն կ'արտաբերէ.
վասն զի մարդը կը սիրէ հետամուտ
ըլլալ այն բանին, զոր իր նմանիքն 'ի
գործ կ'ածեն և զոր իրմեն կ'արգե-
լուն:

Ամեն յառաջագիմութիւն, որ
մարդկան ձեռք կ'ըլլայ, կարծեաց
միութեան արգաւորք կը համարուի.
վասն զի ուր կարծիքները բաժանեալ
և պառակտեալ են, հոն մարդիկ սր-
տով և հազուով մի ըլլալ չը զօրեղով,
երկարաւիութեան մէջ կ'իյնան.
արդ' ուր երկարաւիութիւնն ու ան-
միտքանութիւնը կը թագաւորեն,
հոն կարելի է յառաջագիմութիւն
յուսալ: — Այ:

Խօսքերնուս կարդին մէջ քանի մի
օրինակներ ալ յառաջ բերենք պար-
զութեան համար:

Յայտնի կը տեսնէ ամեն մարդ որ
Վազլիացի աղդին մէջ կարծեաց գը-
լաւոր պառակտում մը կայ, որ այս
յառաջագիմասէր ազգը յետին առ-
տիճանի խոնարհեցուց, մինչդեռ նա
յերկինս վերանալ կը ճգնէր:

Այս ազգին մի մասը համոզուած
է, որ իրենք այն ատեն հսկայաբոյլ
պիտի յառաջագիմեն, և կամ այսպէս
ըսենք՝ առաւել իրենց բարի պիտի
ըլլայ, երբ իրենց կառավարութիւնը
հասարակապետական ըլլայ. և ասոր
հակառակ անդին մեծագոյն մաս մ'
ալ կայսրութիւնը նախամեծար կը
համարէ: Ինչու, այս հարցման լու-
ծումը մեզ բնաւ հարկաւոր չէ, այլ
մեր գիտնալու կարեւոր կէտն է այն: